Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 175 - Ա
որոշման

«ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ստեփանավան համայնքում մարզական կրթության որակի բարձրացման, պատանի մարզիկների համար արդիական պայմանների ստեղծման և համայնքային ենթակառուցվածքների զարգացման նպատակով՝ մարզագույքի անհատույց տրամադրում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի մանկապատանեկան մարզադպրոց և ժամանցային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Դը Հ. Հովնանյան Ֆեմիլի Ֆաուդեյշն մասնաճյուղ» օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Հանրապետության փ. 37, ՀՎՀՀ՝ 01555988)
4.	Ծրագիրը կատարողը	«Դիմակայուն Ստեփանավան» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Ստեփանավան քաղաք, Սոս Սարգսյան 1, ՀՎՀՀ՝ 06960852)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Ստեփանավան համայնք, բնագավառը՝ սպորտ
6.	Ծրագրի բյուջեն	13,000,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի մանկապատանեկան մարզադպրոց և ժամանցային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Ստեփանավան քաղաք, Բոնդարևի 1, ՀՎՀՀ՝ 06404915)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի ապրիլի 11-ից մինչև 2026 թ-ի սեպտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Մարզական գույքի, մարզահագուստի և մարզակոշիկների ձեռքբերում և անհատույց տրամադրում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի մանկապատանեկան մարզադպրոց և ժամանցային կենտրոն» համայնքային ոչ առևտրային

		կազմակերպությանը նախատեսվում է իրականացնել 2026 թվականի ապրիլի 11-ից մինչև 2026 թ-ի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ 13,000,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) բոնցքամարտի ռինգի ներմուծում՝ 4,500,000 դրամի չափով. 2) բոնցքամարտի պարկերի ձեռքբերում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 3) մասնագիտացված մարզասարքերի և պարագաների ձեռքբերում (հեծանիվ, ուժային մարզասարք, ծանրաձողեր, գանտելներ, մեդբոլներ և կշռաքարեր, թենիսի սեղաններ, գնդակներ, արագության պարկեր և այլ պարագաներ)՝ 4,400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 4) ըմբշամարտի գորգի ձեռքբերում՝ 900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի. 5) մարզահագուստի և մարզակոշիկի մարզական պարագաների ձեռքբերում՝ 2,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

31.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ